# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 2 | Հուլիս | 2019 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 1 | Հուլիս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 1427281709 |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 5 2 7 6 2 4 |
| [9] Անվանումը | «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 2 5 2 7 6 2 4 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Արարարատ բանկ N 1510002308480100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | Լևոն Սարգսյան |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

**[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակահատվածը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | դատահոգեբանական փորձաքննություն (գործ 11100619) | հատ | 2 | 32833.333 | | 65666.67 | 20 | 13133.33 | 78800 |
| Ընդամենը | | | | | | 65666.67 | X | 13133.33 | 78800 |

Դուրս գրող՝ HARUTYUNYAN SUSANNA 7314730458

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

02/07/2019 09:53:59

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

<< 18 >> ապրիլի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ն.Մարտիրոսյանս քննարկելով վարույթիս թիվ 11100619 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝**

Նարեկ Հովիկի Շահբազյանը ուրիշի գույքը հափշտակելու նպատակով ավազակային հարձակում կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով իր մտերիմ Հրաչյա Կայծակի Հովհաննիսյանի հետ, 2019թ. հունվարի 2-ին, ժամը 19:00-ի սահմաններում պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել են Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի վրա գտնվող Նաիրիտ գործարանի մոտ, մոտեցել են մարմնավաճառությամբ զբաղվող Սիրուն Ստեփանյանին, սեռական հարաբերություն ունենալու պատրվակով համաձայնության գալուց հետո նստել են վերջինիս կողմից շահագործվող <<Նիսսան Մարչ>> մակնիշի 35ZG049 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ուղևորվել Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի 43-րդ հասցեում գտնվող <<Սև Քար>> կոչվող հյուրանոցի ուղղությամբ: Այդ ընթացքում Հրաչյա Հովհաննիսյանն իր մոտ գտնվող պարանը գցել է Ս.Ստեփանյանի պարանոցից և ձգել, իսկ Նարեկ Շահբազյանն իր մոտ գտնվող որպես զենք հանդիսացող ծալովի դանակով Ս.Ստեփանյանի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով հարվածել է նրա որովայնի շրջանին՝ պատճառելով որովայնի աջ կեսի կտրած-ծակած վերք՝ լյարդի վնասումով, միաժամանակ պահանջելով նշված ավտոմեքենան: Այդ ժամանակ հետևում նստած Հ.Հովհաննիսյանն իր մոտ մոտ գտնվող հրազեն հանդիսացող ատրճանակի կոթով հարվածել է Ս.Ստեփանյանի գլխին, որից հետո Ս.Ստեփանյանին քաշելով տեղափոխել են ավտոմեքենայի հետևի նստարանին, այդ ժամանակ Ն.Շահբազյանն երեք և ավելի անգամ դանակով հարվածել է Ս.Ստեփանյանի մեջքի հատվածին՝ պատճառելով կրծքավանդակի բազմաթիվ կտրած-ծակած թափանցող վերքեր, երկկողմանի պնևմոթորաքսի ձևով ծանր վնաս: Ն.Շահբազյանը նստել է ավտոմեքենայի ղեկին, վարել ու հասնելով Երևան քաղաքի Բագրատունյաց և Եղիշե Թադևոսյան փողոցների խաչմերուկ, կանգնել են կարմիր լուսացույցի տակ, այդ ընթացքում Ս.Ստեփանյանը հետին աջ դուռը բացել ու իրեն դուրս է գցել ավտոմեքենայից, իսկ Ն.Շահբազյանն ու Հ.Հովհաննիսյանը ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ 02.01.2019թ. ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 11100619 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

04.01.2019թ. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում թիվ 11100619 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 11100819 քրեական գործը և միացվել է թիվ 11100619 քրեական գործին:

Նույն օրը՝ ժամը 11:30-ին, մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով ոստիկանության Շենգավիթի բաժին է բերման ենթարկվել Նարեկ Հովիկի Շահբազյանը և հետագայում ներկայացվել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին, որտեղ ավազակային հարձակում կատարելու կասկածանքով ժամը 13:45-ին ձերբակալվել է:

05.01.2019թ. որոշում է կայացվել Նարեկ Հովիկի Շահբազյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235 հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել է կալանավորումը:

Կատարված նախաքննության ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Նարեկ Հովիկի Շահբազյանն ունի <<անձի հիստերիկ տիպի շեշտվածություն, իրավիճակային ռեակցիաներով Z 73.1>> հիվանդություն, բստ Շահումյանի զինկոմիսարիատում կատարված առողջական վիճակի հետազոտման ակտի:

Նկատի ունենալով, որ վերոգրյալ հանգամանքները հիմքեր են տալիս ենթադրելու, որ Նարեկ Հովիկի Շահբազյանը կարող է ունենալ հոգեկան և հոգեբանական խնդիրներ, որպիսի պայմաններում քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 246-248-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1.Սույն քրեական գործով նշանակել ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ <<Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի ստացիոնար դատահոգեբուժական հանձնաժողովին:

2.Փորձագետներին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր-ի 85 հոդվածով նախատեսված նրանց իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետներին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Փորձագետներին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված քրեական գործի նյութերի կամ այլ նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քր. օր-ի 184 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

3.Փորձագետների լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

Դատահոգեբուժական մաս՝

- Նարեկ Հովիկի Շահբազյանը դեպքին նախորդող իրավիճակում արդյոք կարող էր գտնվել հոգեպես անհավասարակշիռ վիճակում, թե ոչ:

- Ն. Շահբազյանը որպես մեղադրյալ ներգրավվելու որոշման մեջ նշված գործողությունները կատարելիս տառապել է արդյոք հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, եթե այո, ապա դրանք զրկել են նրան իր գործողությունները ղեկավարելու և դրանց համար իրեն հաշիվ տալու ունակությունից, թե՛ ոչ:
- Ներկայումս ինչպիսի հոգեկան վիճակում է գտնվում մեղադրյալ Ն. Շահբազյանը, նրա մոտ հոգեկան հիվանդություն կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում հայտնաբերվել է , թե ոչ:
- Ազդել է արդյոք փորձաքննվողի հոգեկան գործընթացները անհատական առանձնահատկությունները /նշել կախված նրանից, թե ինչ նշանակություն ունի գործի համար. հիշողություն, ուշադրություն, ընկալում, մտածողություն, հուզական ռեակցիաների առանձնահատկություններ և այլն/ նրա կողմից իրավիճակի ռեալ բովանդակության և առանձնահատկությունների ընկալման.
- Ն.Շահբազյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե՛ անմեղսունակ:
- Ն. Շահբազյանը հոգեկան հիվանդությամբ, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ, այլ հիվանդագին վիճակով տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ և երբվանից:
- Ն. Շահբազյանը ներկայումս իր հոգեկան վիճակով ունակ է ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, թե ոչ,
- Եթե Նարեկ Շահբազյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ, այլ հիվանդագին վիճակով, ապա նա իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի,

- Դատահոգեբանական մաս՝

- Ունի արդյոք մեղադրյալ Նարեկ Շահբազյանը անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք պայմանավորել են նրա մեղսագրող արարքը:
- Կարող էին արդյոք մեղադրյալ Ն. Շահբազյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները էապես ազդել նրա վարքի վրա մեղսագրվող արարքները կատարելու պահին:
- Ն. Շահբազյանը որպես մեղադրյալ ներգրավվելու որոշման մեջ նշված գործողություններ կատարելիս ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել, գտնվել է արդյոք աֆեկտի վիճակում:
- Ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել Ն.Շահբազյանը քննչական գործողությունների /հարցաքննությունների/ ընթացքում և արդյոք հոգեկան հիվանդություններ ունենալը կարող էր ազդել նրա ցուցմունքների վրա:

4.Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ ներառված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ, և դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5.Փորձաքննություն կատարելու համար Նարեկ Հովիկի Շահբազյանը և քրեական գործի նյութերը կներկայացվի առաջին իսկ պահանջի դեպքում:

Ավագ քննիչ՝ Ն.Մարտիրոսյան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

<< 18 >> ապրիլի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ն.Մարտիրոսյանս քննարկելով վարույթիս թիվ 11100619 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Նարեկ Հովիկի Շահբազյանը ուրիշի գույքը հափշտակելու նպատակով ավազակային հարձակում կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով իր մտերիմ Հրաչյա Կայծակի Հովհաննիսյանի հետ, 2019թ. հունվարի 2-ին, ժամը 19:00-ի սահմաններում պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել են Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի վրա գտնվող Նաիրիտ գործարանի մոտ, մոտեցել են մարմնավաճառությամբ զբաղվող Սիրուն Ստեփանյանին, սեռական հարաբերություն ունենալու պատրվակով համաձայնության գալուց հետո նստել են վերջինիս կողմից շահագործվող <<Նիսսան Մարչ>> մակնիշի 35ZG049 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ուղևորվել Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի 43-րդ հասցեում գտնվող <<Սև Քար>> կոչվող հյուրանոցի ուղղությամբ: Այդ ընթացքում Հրաչյա Հովհաննիսյանն իր մոտ գտնվող պարանը գցել է Ս.Ստեփանյանի պարանոցից և ձգել իսկ Նարեկ Շահբազյանն իր մոտ գտնվող որպես զենք հանդիսացող ծալովի դանակով Ս.Ստեփանյանի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով հարվածել է նրա որովայնի շրջանին՝ պատճառելով որովայնի աջ կեսի կտրած-ծակած վերք՝ լյարդի վնասումով, միաժամանակ պահանջելով նշված ավտոմեքենան: Այդ ժամանակ հետևում նստած Հ.Հովհաննիսյանն իր մոտ մոտ գտնվող հրազեն հանդիսացող ատրճանակի կոթով հարվածել է Ս.Ստեփանյանի գլխին, որից հետո Ս.Ստեփանյանին քաշելով տեղափոխել են ավտոմեքենայի հետևի նստարանին, այդ ժամանակ Ն.Շահբազյանն երեք և ավելի անգամ դանակով հարվածել է Ս.Ստեփանյանի մեջքի հատվածին՝ պատճառելով կրծքավանդակի բազմաթիվ կտրած-ծակած թափանցող վերքեր, երկկողմանի պնևմոթորաքսի ձևով ծանր վնաս: Ն.Շահբազյանը նստել է ավտոմեքենայի ղեկին, վարել ու հասնելով Երևան քաղաքի Բագրատունյաց և Եղիշե Թադևոսյան փողոցների խաչմերուկ, կանգնել են կարմիր լուսացույցի տակ, այդ ընթացքում Ս.Ստեփանյանը հետին աջ դուռը բացել ու իրեն դուրս է գցել ավտոմեքենայից, իսկ Ն.Շահբազյանն ու Հ.Հովհաննիսյանը ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ 02.01.2019թ. ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 11100619 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

04.01.2019թ. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում թիվ 1100619 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 1100819 քրեական գործը և միացվել է թիվ 1100619 քրեական գործին:

04.01.2019թ.՝ ժամը 14:15-ին, մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով ոստիկանության Շենգավիթի բաժին է բերման ենթարկվել Հրայր Կայծակի Հովհաննիսյանը և հետագայում ներկայացվել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին, որտեղ ավազակային հարձակում կատարելու կասկածանքով ժամը 16:45-ին ձերբակալվել է:

05.01.2019թ. որոշում է կայացվել Հրայր Կայծակի Հովհաննիսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235 հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել է կալանավորումը:

Կատարված նախաքննության ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Հրայր Կայծակի Հովհաննիսյանը 13.07.2011թ.-ից հաշվառված է ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում «Հոգեկան և վարքային խանգարումներ կանաբինոիդների գործածման հետևանքով, դադարեցման վիճակ, ածի և վարքի խանգարում» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ վերոգրյալ հանգամանքները հիմքեր են տալիս ենթադրելու, որ Հրայր Կայծակի Հովհաննիսյանը կարող է ունենալ հոգեկան և հոգեբանական խնդիրներ, որպիսի պայմաններում քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 246-248-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1.Սույն քրեական գործով նշանակել ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար դատահոգեբուժական հանձնաժողովին:

2.Փորձագետներին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր-ի 85 հոդվածով նախատեսված նրանց իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետներին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Փորձագետներին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված քրեական գործի նյութերի կամ այլ նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քր. օր-ի 184 հոդվածով նախատեսված պատաս խանատվության մասին:

3.Փորձագետների լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը

Դատահոգեբուժական մաս՝

- Հրաչյա Կայծակի Հովհաննիսյանը դեպքին նախորդող իրավիճակում արդյոք կարող էր գտնվել հոգեպես անհավասարակշիռ վիճակում, թե ոչ:
- Հ. Հովհաննիսյանը որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ նշված գործողությունները կատարելիս տառապել է արդյոք հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, եթե այո, ապա դրանք զրկել են նրան իր գործողությունները ղեկավարելու և դրանց համար իրեն հաշիվ տալու ունակությունից, թե՛ ոչ:
- Ներկայումս ինչպիսի հոգեկան վիճակում է գտնվում մեղադրյալ Հ. Հովհաննիսյանը, նրա մոտ հոգեկան հիվանդություն կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում հայտնաբերվել է . թե ոչ:
- Ազդել է արդյոք փորձաքննվողի հոգեկան գործընթացները անհատական առանձնահատկությունները /նշել կախված նրանից. թե ինչ նշանակություն ունի գործի համար, հիշողություն, ուշադրություն, ընկալում, մտածողություն, հուզական ռեակցիաների առանձնահատկություններ և այլն/ նրա կողմից իրավիճակի ռեալ բովանդակության և առանձնահատկությունների ընկալման:
- Հ. Հովհաննիսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե՛ անմեղսունակ:
- Հ. Հովհաննիսյանը հոգեկան հիվանդությամբ, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ, այլ հիվանդագին վիճակով տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ և երբվանից:
- Հ. Հովհաննիսյանը ներկայումս իր հոգեկան վիճակով ունակ է ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները. թե ոչ.
- Եթե Հ. Հովհաննիսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ, այլ հիվանդագին վիճակով, ապա նա իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնում է, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարիք ունի. թե ոչ. եթե այո. ապա ինչպիսի.

- Դատահոգեբանական մաս՝

- Ունի արդյոք մեղադրյալ Հրաչյա Հովհաննիսյանը անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք պայմանավորել են նրա մեղսագրող արարքը:
- Կարող էին արդյոք մեղադրյալ Հ. Հովհաննիսյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները էապես ազդել նրա վարքի վրա մեղսագրվող արարքները կատարելու պահին:
- Հ. Հովհաննիսյանը որպես մեղադրյալ ներգրավվելու որոշման մեջ նշված գործողություններ կատարելիս ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել, գտնվել է արդյոք աֆեկտի վիճակում:
- Ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել Հ. Հովհաննիսյանը քննչական գործողությունների /հարցաքննությունների/ ընթացքում և արդյոք հոգեկան հիվանդություններ ունենալը կարող էր ազդել նրա ցուցմունքների վրա:

4.Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ ներառված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ, և դրանց պարզաբանումը կարող է

կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5.Փորձաքննություն կատարելու համար Հրայր Կայծակի Հովհաննիսյանը և քրեական գործի նյութերը կներկայացվի առաջին իսկ պահանջի դեպքում:

Ավագ քննիչ՝ Ն.Մարտիրոսյան